Ընչի՞ ո Արցախ

Նպատակ

Արցախում ասթմա ունեցող երեխաները չեն կարող օգտվել իրենց համար կենսական նշանակություն ունեցող դեղամիջոցներից: «Այո» հարթակը համագործակցում է Հայաստանի երեխաների առողջության հիմնադրամի հետ այդ դեղորայքը գնելու և դրանք Արցախ տեղափոխելու նպատակով: Եկեք ամեն ինչ անենք այս դեղամիջոցը Արցախցի երեխաներին շուտ հասցնելու համար:

Ծրագրի նկարագրություն

2022 թվականի դեկտեմբերի 12-ից մինչ օրս ադրբեջանական կողմը փակ է պահում Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհը, որի արդյունքում մեր 120 000 հայրենակիցները՝ նրանց թվում նաև 30 000 երեխա, հայտնվել են բլոկադայի մեջ:

Այս 88 օրերի ընթացքում նույնիսկ սննդամթերք և դեղորայք Արցախ հասցնելը գրեթե անհնար է դարձել: Այս պահին խիստ անհրաժեշտ դեղորայքի տեղափոխումը Արցախ հնարավոր է իրականացնել միայն «Կարմիր Խաչ»-ի մարդասիրական միջազգային կազմակերպության միջոցով:

Խիստ անհրաժեշտ դեղամիջոցների ցանկում է նաեւ Symbicort-ը, որն անհրաժեշտ է ասթմա ունեցող երեխաների բուժման համար: Այս պահին Արցախում կա շուրջ 100 երեխա, որոնք այս դեղամիջոցի կարիքն ունեն: Այս օրերին այն պարզապես հնարավոր չէ գտնել Արցախում: Ասթմա ունեցող երեխաներին այս դեղորայքով օգնելը կենսական նշանակություն ունի:

Ասթման երեխաների շրջանում ամենահաճախ հանդիպող քրոնիկ հիվանդություն է, որի հիմքում ընկած է շնչուղիների քրոնիկ բորբոքումը, ի պատճառով փոքրիկներն ունենում են հազ, սուլող շնչառություն, շնչահեղձությունևկրծքավանդակումսեղմելուզգացողություն:Պատկերացրեք, երբ ծանր ասթմա ունեցող երեխային խնդրել են նկարել ասթման, նա նկարել է իրեն անկողնու մեջ պառկած և իր կրծքավանդակի վրա կանգնած փիղ: Ասթմայի բուժման համար անհրաժեշտ ինհալացիոն դեղորայքի ճիշտ և ժամանակին օգտագործման դեպքում՝ ասթմա ունեցող երեխաները կարող են ապրել բնականոն կյանքով, լիարժեք ինտեգրվել հասարակության մեջ ու վայելել իրենց առողջ մանկությունը:

Այս խնդրի մասին տեղեկանալուց հետո, մենք Այո-ի թիմով որոշեցինք Հայաստանի երեխաների առողջության հիմնադրամի հետ համատեղ շատ արագ ծրագիրիրականացնել,որկարողանանքայսդեղամիջոցըհնարավորինս արագ հասցնել Արցախի երեխաներին: Հարկ է նշել, որ Հայաաստանի երեխաների առողջության հիմնադրամի ջանքերով՝ պատկան մարմինների թույլտվությամբ, վերջին 1,5 տարիների ընթացքում Հայաստանի և Արցախի Հանրապետություններում ապրող 700-ից ավել երեխաներ ապահովվել են Symbicort դեղորայքով:

Բյուջե

Ինչ	Քանակ	Ընդամենը ՀՀ դրամ
Դեղորայք	100	10,000

Փոխարժեք՝ 1 ԱՄՆ դոլար = 380 ՀՀ դրամ